Համագործակցության ընդլայնման իմ շեշտադրումը վկայում է հարաբերությունների ռազմավարական բնույթի մասին, սակայն կարևորն այն է, որ Իրանի և Հայաստանի հարաբերություններն ունեն հակառակորդներ, և երկու երկրներին առնչվող հարցերը պետք է արվեն խնամքով: Մեր հանգուցյալ նախագահը շատ զգայուն էր Հայաստանի հետ կապված սահմանային խնդիրների և դրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, և այդ զգայունությունն ու հոգատարությունը դեռ պետք է հաշվի առնել: Մենք պետք է կարողանանք ապահովել մեր սեփական շահերը:

Այաթոլլա Ալի Խամենեի

Չորեքշաբթի
29 մայիսի 2024թ.
№ 10 (619)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝ ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Սյունիքը նշեց Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 106-րդ տարեդարձը

Հայաստանի առաջին հանրապետությունը ծնվեց 1918 թ. մայիսի 28-ին՝ մայիսյան հրեղեն շաբաթվա արդյունքում:

Մինչ այդ Հայաստան երկրի լինել–չլինելու հարցը վճռվում էր Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում ու Զանգեզուրում: Եվ այդ ճակատամարտերի հաղթական ելքի շնորհիվ էլ՝ 600 տարի անց, վերականգնվեց հայոց պետականությունը:

Հայոց ազգային խորհուրդը մայիսի 30-ին (Թիֆլիսից) հանդես եկավ հայտարարությամբ, որը ներկայացնում ենք ստորև.

«Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ, հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր

Շարունակությունը՝ էջ 3

Թյուրիմացությունը, անգիտությունը, անծանոթությունը մի մութը դրություն է. իսկ ամեն չար բան մութիցն է ծնում: Մթության մեջ կասկածում ենք ամեն շարժումից, վախենում ենք իրարից, մեր վախը իրար հաղորդելով վախով վարակում ենք ավելի մեծ բազմություններ, դարձնում ենք մի ահռելի երևույթ, մի հիվանդոտ դրություն, ուր ամենափոքր առիթից սուտ ու սխալ ծնունդ են առնում հրեշավոր առասպելներ ու հեշտ էլ դառնում են իրար թշնամի ամբողջ ժողովուրդներ: Այնուհետև կուրանում ենք իրար լավ կողմերը տեսնելու, խլանում ենք առողջ, բարի խոսքի հանդեպ, դառնում ենք հակամետ ամեն չար բանի հավատալու, հետևելու, և էդ տեսակ ժամանակները դուրս եկող ամեն մի սրիկա կարող է խաղալ ժողովուրդների ճակատագրի հետ:

Հովհաննես Թումանյան

«ՀԱՊԿ անդամ առնվազն 2 երկիր գիտեմ, որ մասնակցել են մեր դեմ պատերազմի նախապատրաստությանը»

«2020 -ի 44-օրյա պատերազմի նախապատրաստությանը մասնակցել են ոչ մեր կողմից, մեր դաշնակիցները: Ես ՀԱՊԿ -ի անդամ առնվազն 2 երկիր գիտեմ, որ մասնակցել են մեր դեմ պատերազմի նախապատրաստությանը: Էդ պատերազմի նպատակը եղել է Հայաստանի անկախ պետության չգոյությունը: Այդպիսի փորձեր 2020 -ի պատերազմից հետո էլի են եղել, 2021 -ի մայիսին, 2022 -ի սեպտեմբերին, 2023 -ի սեպտեմբերին, բայց չի ստացվել: Մի հատ էլ փորձեցին 2024 -ի մայիսի 9 -ին, էլի չստացվեց, ու էլի չի ստացվելու», – հայտարարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: »

Հայաստանում ՌԴ դեսպանը Մոսկվա է կանչվել

Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Սերգեյ Կոպիրկինը մայիսի 24–ին խորհրդակցությունների է կանչվել Մոսկվա: Այդ մասին տեղեկանում ենք ՌԴ ԱԳՆ կայքում տեղադրված փաստաթղթից:

ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը մեկնաբանել է դեսպան Սերգեյ Կոպիրկինին Մոսկվա կանչելը՝ «Դեսպանները պարբերաբար գալիս են խորհրդակցությունների»: »

Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսը դատապարտել է Ամենայն հայոց կաթողիկոսի հետ կապված միջադեպը



Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն դատապարտել է Սարդարապատի հուշահամալիրում Ամենայն հայող կաթողիկոսի հետ կապված միջադեպը: Այս մասին տեղեկանում ենք Արամ Ա-ի ֆեյսբուքյան էջում հրապարակված հայտարարությունից:

«ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՉԻ ԿՐՆԱՐ ԱՆՏԱՐԲԵՐ ՄՆԱԼ Ի ՏԵՍ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՔԱՆԴՈՒՄԻՆ» - Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Քիչ առաջ իմացանք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն հայոց Կաթողիկոսին Սարդարապատ մուտքի ժամանակ ոստիկաններուն կողմէ եղած խոչընդոտին մասին: Խստօրէն կը դատապարտենք այս մեծապէս ամօթալի երեւոյթը, որ խոտոր կը համեմատի մեր ազգի վարքագիծին եւ բարոյական ու հոգեւոր արժէքներուն:

Ո՞ւր կ՚երթայ հայաստանը՝ մեր սիրելի հայրենիքը, որուն անկախութեան ու յաւերժութեան ի խնդիր դարեր շարունակ մեր սուրբերը աղօթեցին, մեր նախահայրերը ստեղծագործեցին եւ մեր նահատակները իրենց արիւնը թափեցին: Ինքնաքանդումի ու ինքնասպանութեան ներկայ ընթացքը պէտք է կանգ առնէ: Մեր եկեղեցին չի՛ կրնար անտարբեր մնալ ի տես հայրենիքի քանդումին», – նշված է հայտարարության մեջ:

Գործող իշխանությանն ընդդիմացող ուժերը հանրապետության վարչապետի թեկնածու են առաջադրել Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանին.

քաղաքացիական անհնազանդություն և ուժայինների գործողություններ

Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հայտնեց, որ Ամենայն Հայոց կաթողիկոսին և հոգևոր եղբայրներին խնդրել է սառեցնել իր երեսնամյա ծառայությունը և պատրաստվում է անձնական պատասխանատվություն ստանձնել ողջ ընթացքի համար:



Հանրապետության հրապարակում մայիսի 26-ին «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հանրահավաքում ներկայացվեց շարժման օրակարգն ու հայտարարվեց վարչապետի թեկնածուի անունը:

Հանրահավաքը մեկնարկեց լռության րոպեով՝ որպես հարգանքի տուրք Լոռիում բնական աղետից զոհված հայրենակիցների հիշատակին: Այնուհետև Հայ Առաքելական եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը զորակցություն և աջակցություն հայտնեց Լոռիում և Տավուշում բնական աղետի հետևանքով տուժածներին՝ աղոթք հղելով տուժածների շուտափույթ ապաքինման ու անհայտ կորածների գտնվելու համար:

Նրա խոսքով՝ հանրահավաքը հայտարարում է «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման վճռական փուլի մասին:

Անդրադառնալով շարժման կողմից վարչապետի առաջադրվելիք թեկնածուին՝ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը համոզմունք հայտնեց, որ նա պետք է լինի վերկուսակցական, պետք է ձևավորի անցումային կառավարություն, որը կլինի հաշտության կառավարություն՝ հստակ ունենալով օրակարգային ուղղություններ:

Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը համոզմունք հայտնեց, որ նա պետք է լինի վերկուսակցական, պետք է ձևավորի անցումային կառավարություն, որը կլինի հաշտության կառավարություն՝ հստակ ունենալով օրակարգային ուղղություններ:

«Նախ, այն պետք է լինի ներքին հաշտության կառավարություն՝ հիմնված արդարության և արդարադատության վրա, կյանքի ապաքինմամբ և զարգացմամբ պայմանավորված:

Արտաքին հարաբերություններում պետք է վարի առանց հակառակների քաղաքականություն՝ ամեն գնով սառեցնելով ներկայիս իրավիճակը՝ քաջ գիտակցելով խաղաղության արժեքը:

Նոր կառավարությունը պետք է ձգտի խաղաղության՝ իրական կայուն արժանապատիվ և երկարաժամկետ, ուժի և սպառնալիքի կիրառման բացառմամբ, կարգավորի մարդասիրական խնդիրները՝ գերիների և Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության վերադարձով պայմանավորված:

Խաղաղության պայմանագրի շուրջ. իրական, խորքային, արդար, կայուն, երկարաժամկետ խաղաղության ապահովմանը միտված բանակցությունները պետք է ներառեն նաև արցախցիների անվտանգ վերադարձի, լայն իմաստով, անվտանգության և, բոլոր իմաստներով, պաշտպանության խնդիրները»,– նշեց արքեպիսկոպոսը:

Սահմանազատման ու սահմանագծման գործընթացն էլ, ըստ նրա, պետք է լինի խաղաղության պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո:

Այնուհետև կպատրաստվեն և կանցկացվեն արտահերթ կամ հերթական ընտրությունները՝ ազատ և թափանցիկ, որոնց երաշխավորը կլինի անցումային կառավարության ղեկավարը՝ առանց հավակնություն ունենալու դրանց մասնակցել:

Պրոֆեսոր, արևելագետ Գուրգեն Մելիքյանն էլ իր ելույթում ներկայացնելով վարչապետի թեկնածուի անհրաժեշտ որակների ու ունակությունների վերաբերյալ պատկերացումները, հայտարարեց, որ բոլոր հանդիպումների ու քննարկումների մասնակիցները միակարծիք են եղել, որ վարչապետի իրենց թեկնածուն պետք է լինի Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը:

Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը հայտնեց, որ Ամենայն Հայոց կաթողիկոսին և հոգևոր եղբայրներին խնդրել է սառեցնել իր երեսնամյա ծառայությունը և պատրաստվում է անձնական պատասխանատվություն ստանձնել ողջ ընթացքի համար:

Մարզկենտրոն Կապանում նշվեց Հայաստանի առաջին հանրապետության 106-րդ տարեդարձը

Հանրապետության օրվան նվիրված հանդիսությունները մարզկենտրոն Կապանում մեկնարկեցին Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի հուշակոթողին ծաղկեդրում կատարելով: Արարողությանը մասնակցում էին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, զինվորականության և իրավապահ կառույցների, կրթության և մշակույթի ոլորտների, ՀՅԴ Կապանի «Արամ մանուկյան» կոմիտեության, Կապանի ավագանու անդամներ, տարբեր տարիքի և զբաղմունքի մարդիկ:

Այնուհետև հարգանքի տուրք մատուցվեց 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալներ, Զանգեզուրյան հերոսամարտի սպարապետներ Պողոս Տեր-Դավթյանի և Գարեգին Նժդեհի հիշատակին:

Կեսօրին տոնակատարության մասնակիցներին հաճելի անակնկալ էր սպասվում: Կապանի մշակույթի կենտրոնի բացօթյա դահլիճն ընդունեց առաջին ունկնդիրներին: Բեմահարթակը տրամադրվել էր փողային նվագախմբին (գեղարվեստական ղեկավար և դիրիժոր՝ Սամվել Հայրապետյան), որը հնչեցրեց հայ, ռուս, արևմտաեվրոպացի կոմպոզիտորների սրտամոտ ու հարազատ ստեղծագործություններ՝ հիրավի ստեղծելով տոնական մթնոլորտ: Համերգը եզրափակվեց Կ.Հայրապետյանի «Տոնական պարը» և Ագապկինի «Սլավոնուհու հրաժեշտը» ստեղծագործությունների կատարումներով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մայիսի 28-ը՝ ՌԴ սահմանապահ ծառայության մասնագիտական տոն

Իրանի Իսլամական Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի հսկողությունն իրականացնող ՌԴ անվտանգության դաշնային ծառայության սահմանային զորքերի Մեղրու ջոկատում տոնական օր է: Նշվում է ՌԴ ԱԴԾ սահմանապահ ծառայության անձնակազմի մասնագիտական տոնը:

«Սյունյաց երկիրը» շնորհավորում է Մեղրիի սահմանապահ ջոկատին՝ մասնագիտական տոնի առթիվ և մաղթում հաջողություններ մարտական պատրաստականության ու մեր երկրի հարավային սահմանները պաշտպանելու գործում:

Մեղրիի սահմանապահ ջոկատը կազմավորվել է 1955 թվականին և անցած տարիներին ամենայն պատասխանատվությամբ է իրականացրել Իրանի հետ մեր ունեցած

պետական սահմանի 45 կմ երկարությամբ տեղամասի պաշտպանությունը:

Ուշագրավ է հանգամանքը, որ Մեղրու սահմանապահ ջոկատում կողք-կողքի ծառայություն են իրականացնում Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդների ներկայացուցիչները, ինչը հայ-ռուսական հարաբերությունների լուսավոր էջերից է: Եվ համատեղ ծառայությամբ նրանք բազմապատկում են բարեկամության և դրացիության դարերով ձևավորված ավանդույթները:

Ուշագրավ է նաև, որ անցած տարիներին Մեղրու բնակչությունը մշտապես աջակցել է սահմանապահներին՝ իրենց առջև դրված խնդիրները կատարելու գործում:

Եվ ուրեմն՝ մասնագիտական տոնի առիթով մենք ոչ միայն շնորհավորում ենք սահմանապահներին, այլև շնորհակալություն հայտնում նրանց՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի հարավային սահմանների անվտանգությունը պատշաճորեն ապահովելու համար:

28 ՄԱՅԻՍԻ 2024Թ.

Սյունիքը նշեց Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման 106-րդ տարեդարձը

Սկիզբը՝ էջ 1

ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»:

1918 թ. մայիսի 28-ին հանրապետության հռչակումից հետո առաջնահերթ խնդիրներից մեկը իշխանության մարմինների ստեղծումն էր: Սկզբում իշխանության ժամանակավոր գործառույթներն իրականացնում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որը, թուրքերի կողմից ճանապարհներին հարուցած արգելքների պատճառով (երկաթուղին թուրքերի ձեռքին էր), ինչպես և այլ հանգամանքների բերումով, չէր կարողանում Վրաստանից տեղափոխվել Երևան: Հայաստանում իշխանության ղեկը շարունակում էր մնալ Երևանի ազգային խորհրդի ձեռքում՝ Արամ Մանուկյանի ղեկավարությամբ: Վերջինս հսկայական գործ կատարեց Երևանում պետականության հռչակումը նախապատրաստելու և նորաստեղծ պետությունն ամրապնդելու ուղղությամբ: Պատահական չէ, որ Արամն իրավամբ համարվում է հայոց պետականության վերականգնման հեղինակը: Նրա ղեկավարած հատուկ կոմիտեն մինչև հուլիսի կեսերը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ժամանումը Երևան, Հայաստանում իրականացրեց ժամանակավոր կառավարության գործառույթները:

1918 թ. հուլիսի 19-ին Ազգային խորհուրդը վերջապես ժամանեց Երևան:

Ազգային խորհուրդների (Թիֆլիսի, Երևանի) և քաղաքական կուսակցությունների համաձայնությամբ կազմվեց իշխանության բարձրագույն մարմին՝ Հայաստանի խորհուրդ (պառլամենտ, խորհրդարան), որի մեջ մտան ազգային խորհուրդների, տարբեր կուսակցությունների, անկուսակցականների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, ընդամենը՝ 46 հոգի (18՝ դաշնակցական):

Հուլիսի 24–ին հրապարակվեց կառավարության կազմը. վարչապետ՝ ճարտարապետ Հովհաննես Քաջազնունի, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, արտգործնախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան և արդարադատության նախարար՝ Գրիգոր Տեր-Պետրոսյան:

Օգոստոսի 1-ին Երևանում հանդիսավորությամբ բացվեց հայոց առաջին պառլամենտի՝ խորհրդի (խորհրդարանի) առաջին նստաշրջանը: Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ):

Ահա, թե ինչ գնահատանքի արժանացավ հայոց պետականության վերականգնումը Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի կողմից. *«Մեր սերունդը էն սերունդն է, որ դեռ երեկ ազատ Հայաստան էր երազում: Ազատ Հայաստան էին երազում ռուսահայը, տաճկահայը, պարսկահայը և բոլոր հեռավոր գաղութները: Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խավերը. առանց սեռի ու հասակի խտրության: Ի՞նչ ասես, որ չէր տա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը: Ու հանկարծ: Արդեն իրականություն է երեկվա մեծ երազը. ազատ է Հայաստանը. ամբողջ աշխարհի կողմից ճանաչված ինքնուրույն հանրապետություն է նա. իր եռագույն դրոշակով կանգնած է մյուս պետությունների շարքում»:*

* * *

Հանրապետության օրվա կապակցությամբ Սյունիքի մի շարք բնակավայրերում այսօր տեղի կունենան միջոցառումներ:

Ըստ նախնական տեղեկությունների՝ բոլոր միջոցառումներում հնչող գլխավոր հարցերը կլինեն՝ Սյունիքի օկուպացված տարածքների ազատագրում, հայոց անկախ պետականության անվտանգության ապահովում, հայոց արժանապատվությանը տեր կանգնելու վճռականություն:

//

Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակը հանդիսավորապես նշվեց Գորիսի Շառլ Ազնավուրի անվան դպրոցում

Երբ Գորիսի հերոսների պանթեոնի ճանապարհի մոտ գտնվող նախկին պիոներ պալատի շենքում տեղակայվեց քաղաքի երկրորդ երաժշտական դպրոցը, կարճ ժամանակ անց այն կոչվեց Շառլ Ազնավուրի անունով: Դա մարդու կենդանության օրոք անվանակոչության բացառիկ երևույթ էր Հայաստանում (հետագայում՝ դպրոցի հիմքի վրա, վերակազմավորվեց Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցը): Ազնավուրը ողջ էր, և ոչ ոքի մտքով երբևէ չէր անցնի, թե նա մինչև կյանքի վերջը մի քանի անգամ կայցելի Գորիս: Շատերի համար այսօր էլ անբացատրելի է, թե Սյունիքի մարզի ողջ բնակավայրերից ինչու Ազնավուրի սիրտը շահեց հենց մեր զարմանահրաշ Գորիսը:



...Դպրոցի տարեգրության հիշարժան դեպքերից է 1994թ. այն օրը, երբ Շառլ Ազնավուրն առաջին անգամ ժամանեց Գորիս: Նրա պատվին Գորիսի թատրոնի լեփ-լեցուն դահլիճում կազմակերպվեց հանդիպում քաղաքի հասարակության հետ, որն ուղեկցվում էր գրական-գեղարվեստական համադրությամբ: Միջոցառման ժամանակ հանդիսության մասնակից մի փոքրիկ աղջիկ բարձրացավ բեմ և մեծ շրջանակով գեղեցիկ նկար նվիրեց Ազնավուրին: Անակնկալից զգացված՝ Ազնավուրը վերցրեց նկարը, գրկեց աղջնակին: Քանի որ բեմահարթակից չինչեց, թե աղջիկն ով էր և նրա տվածն ինչ էր, Գորիսի Շառլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցի աշխատակցուհի Սուսաննա Հովհաննիսյանը հանկարծակի բեմ բարձրացավ և խոսափողով հնչեցրեց.

– Սիրելի Շառլ Ազնավուր: Ձեզ նվիրածը Գորիսի՝ Ձեր անունը կրող երաժշտական դպրոցի սան Լուիզա Ադամյանի նկարած կտավն է:

Ազնավուրը ցնցվեց.

– Ինչպե՞ս ... Այս քաղաքում իմ անունով երաժշտական դպրո՞ց...

Դահլիճն ակտիվացավ, թնդացին ծափահարություններ....

* * *

Գորիսի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցի տարեկան հաշվետու համերգն այս անգամ այլ իմաստ, նպատակ և խորագիր ուներ: 2024թ. մայիսի 22-ը Շառլ Ազնավուրի ծնունդյան 100-ամյակի օրն էր, և դպրոցի տնօրինությունն ազնավուրյան տարվա միջոցառումների զարդը համարեց հենց այդ ցերեկույթը:

Դպրոցի առաջին հարկի ընդարձակ ճեմասրահը տոնական տեսք էր ստացել: Վերևում դպրոցի կերպարվեստի բաժնի դասատու Լիլիթ Մեժլումյանի հեղինակած՝ Ազնավուրի մեծադիր գծանկարն էր: Աջ և ձախ կողմերում՝ «ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ-100. ՀԱՎԵՐԺ ՍԵՐ» խորագիրը: Այս արտահայտիչ բառերի աջ և ձախ կողմերում, համապատասխանաբար, Հայաստանի և Ֆրանսիայի պետական դրոշներն էին: Ուշագրավ դիպված. միջոցառումը փակ դահլիճում չէր անցկացվում. թեև բաց դուռ չկար, բայց, ո՞վ զարմանք, թեթև միջանցիկ քամին ողջ միջոցառման ընթացքում մեղմորեն ծածանում էր Հայաստանի և Ֆրանսիայի դրոշները, ու, իրարից հեռու, բայց այնքան համաչափ, որ կարծես խորհրդանշում էին հայ-ֆրանսիական ամուր ու օրեցօր ավելի ամրապնդվող կապերը: Բեմի երկու կողմում դրված էին կերպարվեստի բաժնի դասատուներ Ռուզաննա Հովսեփյանի և Մերի Բունիաթյանի՝ Ազնավուրի խոշոր դիմապատկերով երկու գծանկարը, ամեն մի նկարի մոտ՝ դպրոցի սաների պատրաստած հայաբույր կավե ինքնատիպ սափորների ցուցասեղաններ, որոնց ճեղքերից մոմն այնպես էր մութը ճեղքում, ասես Ազնավուրի միջոցով հայ մշակույթի լույսի հաղթանակն էր տոնվում՝ ընդդեմ խավարի:

Դպրոցի սաների հաղորդավարական մուտքն ու տեքստային անցումներն ամբողջապես շաղախված էին Ազնավուրով. ծնունդ, դժվարին կյանք, երգարվեստի հաղթարշավ, համաշխարհային ճանաչում, համբավ ու փառք, բայց միշտ իրեն պարզ ու հասարակ պահող մի մահկանացու... Մեծ հայ, բարեգործ, Հայաստանի հետ կապերը միշտ ամուր պահող երևույթ:

Համերգացանկում ընդգրկված էին Ազնավուրի «Քեզ համար, Հայաստան», «Հավերժ սեր», «Լա Բոհեմ», «Ավե Մարիա» ստեղծագործությունները: Սրտից բխած սեր տարածեցին դպրոցի երգչախմբի ղեկավար Էմմա Ղազարյանի դիրիժորությամբ՝ դպրոցի երգչախումբը, Գոռ Դադալյանի ղեկավարությամբ՝ փողային քառյակը (շեփոր՝ Գոռ Դադալյան, բարիտոն՝ Մարտին Սաթունց, բաս՝ Մարտուն Դադալյան, կլարնետ՝ Հովսեփ Հովհաննիսյան), Նարինե Բաղդասարյանի ղեկավարությամբ, Նելլի Մանուչարյանի նվագակցությամբ՝ նվագարանների համույթը:

Երգարվեստի բազմաբնույթ ճյուղեր ընդգրկող միջոցառման հագեցած ծրագրում ընդգրկված էին հայ և համաշխարհային երգարվեստի գլուխգործոցներ՝ Սայաթ-Նովա՝ «Քամանչա», Սպենդիարյան՝ «Հիջազ», Ա.Խաչատրյան՝ «Դիմակահանդես», Մավիսակալյան՝ «Ջան, Հայաստան», Պետրոսյան՝ «Կոնցերտային Էքսպրոմտ», Նաղդյան՝ «Կլոր պար», Խ.Ավետիսյան՝ «Կակաչներ», Պետրոսյան՝ «Հայկական ժողովրդական երգերի շարան», Դ.Հալաջյան՝ «Յար կկոնդաս», Ռ. Ամիրխանյան՝ «Երազի իմ, երկի՜ր, Հայաստան», Շմիտց՝ «Ամերիկյան ջազ», Չիարա՝ «Իսպանական Բոլերո», Միշել Մանգան՝ «Ռոմանս», Վիվալդի՝ «Կոնցերտ Լյա մինոր 2 ջութակի համար», «Փարիզի երկնքի տակ», Քայլերգերի շարան: Իրենց կատարողական արվեստը բարձր մակարդակով ցուցադրեցին դասատուներ Նելլի Մանուչարյանը, Մերի Ջավահիրյանը, Նաիրա Գրիգորյանը, Հովսեփ Հովհաննիսյանը, Անահիտ Հովհաննիսյանը, Ռոմիկ Օհանջանյանը, նվագակցողներ Էմմա Ղազարյանը, Նաիրա Գրիգորյանը, դպրոցի սաներ Տաթև Մանգասարյանը, Արևիկ Առուստամյանը, Մոնիկա Մալինցյանը, Ֆրիդա Բաղդասարյանը, Հարութ Ասատրյանը, Կարինա Միրաքյանը, Մարիետտա Գևորգյանը, Եսթեր Արզումանյանը, դպրոցի երգչախումբը, վոկալ համույթը (ղեկավար՝ Էմմա Ղազարյան), ջութակահարների համույթը (ղեկավար՝ Անահիտ Հովհաննիսյան), նվագարանների համույթը (ղեկավար՝ Նարինե Բաղդասարյան), փողային քառյակը (ղեկավար՝ Գոռ Դադալյան), փողային նվագախումբը (ղեկավար՝ Արմեն Գրիգորյան):

***Հ.Գ.-1** Իբրև վերջաբան, Ազնավուրի ծննդյան օրվան համահունչ պատշաճ համարեցի «Սյունյաց Երկրի» ընթերցողին հիշեցնել մեծանուն երգչի մահվանից 7 տարի առաջ՝ 2011թ. հոկտեմբերի 7-ին, «Նուվել դ'Աղմենի» թերթի թղթակցի հարցերին Շառլ Ազնավուրի մի քանի ցնցող պատասխանները.*

«Մեր հակառակորդները մեզանից սպասում են, որ նրանք, ովքեր դեռ հիշողություն ունեն, մեռնեն, որպեսզի դրանից պրծնեն:

... Ո՞ւր ենք գնում մենք: Այս ընթացքում Հայաստանը տառապում է ամեն օր: Հայաստանը դատարկվում է: Քիչ ժամանակ անց այն կդառնա մի դատարկ խխունջ: Ո՞ւմ է դա ձեռնտու... Հայաստանը մեծ վտանգի մեջ է...»:

***Հ.Գ.**-2 Գորիսի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցը՝ Մայիս Գալստյանի ղեկավարությամբ, հիրավի, դարձել է Գորիսի մշակութային կենտրոններից մեկը, ինչի հերթական ապացույցն էր նաև մայիսի 22-ին կազմակերպված գեղեցիկ ցերեկույթը՝ նվիրված Շառլ Ազնավուրի 100-ամյակին:*

ՎԱՀԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Լուրեր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն Արցախից տեղահանված և Սյունիքի մարզում բնակություն հաստատած հայրենակիցներին հերթական աջակցությունն է տրամադրել: Կապան, Քաջարան և Մեղրի խոշորացված համայնքներում հաստատված արցախցիների աջակցության ծրագրի համար ընկերությունն անցած տարի հատկացրել է 164 միլիոն դրամ:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն իր գործընկեր Craft excellence ուսումնական կենտրոնի հետ տարածաշրջանից հավաքագրել և կազմակերպել է խառատների, էլեկտրիկներ և զոդողների տեսական և գործնական դասընթացներ:

Նպատակն է՝ երիտասարդ մասնագետներ պատրաստել, ովքեր հիմնովին պատրաստ կլինեն ներդնել իրենց գիտելիքներն աշխատանքում:

Մայիսի 22-ին՝ եռամսյա դասընթացների ավարտից և քննությունների հաջող հանձնումից հետո, մասնագետներին շնորհվեցին համապատասխան հավաստագրեր:

Չորս տասնյակից ավելի որակավորում ունեցող աշխատակիցները կլրացնեն աշխատաշուկայի պահանջարկը և իրենց հմտություններով կնպաստեն մարզի մասնագիտական հիմնարկների առաջխաղացմանը:

Գորիսում բացվեց քաղաքացիների սպասարկման գրասենյակ

Գորիսում բացվեց քաղաքացիների սպասարկման վերանորոգված գրասենյակը (ՔՍԳ), որը կշարունակի «Մեկ պատուհան» սկզբունքի համաձայն ծառայություններ մատուցել քաղաքացիներին: ՔՍԳ-ի նպատակն է՝ ապահովել համայնքապետարանի և քաղաքացու միջև առավել մատչելի և դյուրին հաղորդակցությունը: Միջոցառմանը մասնակցում էին բազմաթիվ հյուրեր՝ ԵՄ և այլ դեսպաններ, միջազգային կազմակերպությունների, մարզային իշխանության ներկայացուցիչներ:

Գրասենյակը հիմնվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇՀԳ) համաֆինանսավորմամբ: Այն իրականացվում

է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ համատեղ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՔՍԳ-ի վերանորոգման և կահավորման ամբողջական աշխատանքները:

Սյունիքում 130 ընտանիք արդեն օգտվում է 16 մլն դրամ պետական աջակցությամբ տուն կառուցելու ծրագրից

- Քարաշեն. հաստատված՝ 6 հայտ, վարկավորված՝ 5 հայտ,
- Խնձորեսկ. հաստատված՝ 27 հայտ, վարկավորված՝ 7 հայտ,
- Ներքին Խնձորեսկ. հաստատված՝ 6 հայտ,
- Հարթաշեն. հաստատված՝ 13 հայտ, վարկավորված՝ 4 հայտ,
- Ճակատեն. հաստատված՝ 1 հայտ, վարկավորված՝ 1 հայտ,
- Կոռնիձոր. հաստատված՝ 5 հայտ, վարկավորված՝ 3 հայտ,
- Շիկահող. հաստատված՝ 1 հայտ, վարկավորված՝ 1 հայտ,
- Քարահունջ. հաստատված՝ 30 հայտ, վարկավորված՝ 10 հայտ,
- Տեղ. հաստատված՝ 21 հայտ, վարկավորված՝ 9 հայտ,
- Խոտ. հաստատված՝ 5 հայտ,
- Ագարակ. հաստատված՝ 1 հայտ, վարկավորված՝ 1 հայտ,
- Սյունիք. հաստատված՝ 2 հայտ, վարկավորված՝ 2հայտ,
- Նռնաձոր. հաստատված՝ 9 հայտ, վարկավորված՝ 6 հայտ,
- Ծավ. հաստատված՝ 1 հայտ,
- Վաղատուր. հաստատված՝ 1 հայտ,
- Եղվարդ. հաստատված՝ 1հայտ, վարկավորված՝ 1 հայտ:



Այսպիսով՝ մարզից ներկայացված ու հաստատված 130 հայտից արդեն իսկ վարկավորվել է 50-ը: Հիշեցնենք, որ այս միջոցառման շրջանակում քաղաքացիները հնարավորություն ունեն հիփոթեքային վարկավորմամբ կառուցել իրենց տունը սահմանամերձ գյուղական բնակավայրում՝ պետության աջակցությամբ՝ 16 մլն դրամի շրջանակում:

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է՝

- ունենալ գրանցված ամուսնություն Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունում,
- ամուսիններից առնվազն մեկը պետք է ունենա Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Միջոցառման շահառու կարող են դառնալ նաև ԼՂ-ից բռնի տեղահանվածները:

SYUNIK.TV

Շաքի գյուղի մոտակայքում կկառուցվի մաքսային և լոգիստիկ կենտրոն

Կառավարության հավանության են արժանացել Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Սյունիքի մաքսային և լոգիստիկ կենտրոն» 2 մլն եվրո արժողությամբ դրամաշնորհային և 10 մլն եվրո արժողությամբ վարկային համաձայնագրերի ստորագրման առաջարկությունները:

Կառավարության հաղորդագրության համաձայն՝ ծրագրի նպատակն է Սյունիքի մարզի Շաքի գյուղի մոտակայքում (Սիսիանից 7 կմ հեռավորության վրա՝ Հյուսիս-հարավ ավտոմոբիլային միջանցքին հարող տարածքում) գտնվող 7.7 հա հողատարածքում մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցումը, դրա տեխնիկական ապահովումն ու ծրագրի իրականացման աջակցության խորհրդատվական ծառայությունների մատուցումը:

«Ծրագրի իրականացման համար ՎՀԵԲ-ից ներգրավվելու են վարկային միջոցներ՝ 10 մլն եվրոյի չափով:

Նախատեսվում է կառուցել վարչական շենք: Կենտրոնը հագեցված է լինելու լաբորատոր սարքավորումներով և պարագաներով, ռենտգենաճառագայթային սարքավորումներով մարդատար տրանսպորտի, ձեռքի ուղեբեռի և փոքրածավալ բեռների զննման համար, մարդկանց սկանավորման ռենտգենաճառագայթային սարքավորմամբ, UHF ռադիոկայաններով, տվյալների մշակման կենտրոնով, փաստաթղթեր ընթերցող սարքերով, փաստաթղթերի իսկությունը ստուգող սարքերով, ելքի և մուտքի հատվածներում տեղադրվող հակաճառագայթային սարքավորումներով, բեռնատար մեքենաների տվյալները գրանցող սարքավորումներով և այլն:

Նման կենտրոնների ստեղծմամբ հնարավորություն է ընձեռվում՝ երկրի ամբողջ տարածքում ունենալու բավարար մաքսային ենթակառուցվածք թե՛ շենքային ու տարածքային պայմանների, թե՛ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական հագեցվածության և թե՛ արտաքին տնտեսական գործունեության մասնակիցներին մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերի հասանելիության ու շահագործման հարմարավետության տեսանկյունից:

Այս կենտրոններում ապրանքների ներմուծման և արտահանման դեպքերում մաքսային ձևակերպումների հետ կապված ամբողջական գործընթացները իրականացվում են մեկ վայրում՝ հայտարարագրումից մինչև ապրանքների բացթողումը: Այսպիսով՝ էլեկտրոնային կառավարման համակարգերի և թվային լուծումների կիրառման վրա հիմնված կենտրոնի գործարկմամբ հնարավոր կդառնան նաև «Մեկ պատուհան» կոնցեպտի ամբողջական և լիարժեք ներդրումն ու կիրառումը, ինչը հնարավորություն կստեղծի՝ մեկ էլեկտրոնային հայտի միջոցով իրականացնելու ապրանքների մաքսային ձևակերպումների, դրա համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի ստացման գրեթե ամբողջական գործընթացը «Մեկ պատուհանի» սկզբունքով: Համակարգի գործարկումը կնպաստի ՀՀ սահմանով տեղափոխվող ապրանքների արգելքների և սահմանափակումների պահպանմանն ուղղված միջոցառումների պարզեցմանը և դրա համար ծախսվող ժամանակահատվածի կտրուկ կրճատմանը:

Կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա՝ անհրաժեշտ բոլոր գործառնություններն իրականացնելու մեկ վայրում՝ արդյունքում էականորեն նվազեցնելով ապրանքների ժամանման պահից մինչև դրանց բացթողումը ծախսվող ժամանակը, նվազագույնի կհասցվեն նաև մաքսային մարմին-տնտեսվարող սուբյեկտ շփումը, կոռուպցիոն ռիսկերը:

Ըստ հիմնավորման՝ 2022թ. ընթացքում Հարավային մաքսատուն-վարչությունում հայտարարագրվել է 373,000 տոննա բեռ, իսկ 2023թ. ընթացքում՝ 569,000 տոննա:

Ձևակերպված հայտարարագրերի քանակը 2022թ. կազմել է 8,100, իսկ 2023թ.՝ 14,300:

Նշված բեռները 2022թ. տեղափոխվել են 17,600 տրանսպորտային միջոցներով, իսկ 2023թ.՝ 29,900 տրանսպորտային միջոցներով:

Միաժամանակ, կենտրոնի գործարկումը դրական ազդեցություն կունենա նաև մայրուղու երթևեկության վրա. Հարավային մաքսատուն-վարչության շրջակայքի տարածքի նեղ բնույթը պատճառ է հանդիսանում, որ բեռնատարները երբեմն ստիպված լինեն հերթ կանգնել հարակից մայրուղու վրա:

Ծրագրի իրականացմամբ ավելի լավ կկազմակերպվի երթևեկության հոսքը տվյալ տարածքում՝ լուծելով նշված խնդիրը»,- նշված է հաղորդագրության մեջ:

Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը, Մարտակերտի քաղաքապետ Միշա Գյուրջյանը և Ասկերանի քաղաքապետ Հայկ Շամիրյանը՝ անազատության մեջ

Ասկերանի քաղաքապետ Հայկ Շամիրյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը: Ձերբակալված է Մարտակերտի քաղաքապետ Միշա Գյուրջյանը, Ստեփանակերտի քաղաքապետ Դավիթ Սարգսյանը:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի՝ Ստեփանակերտի քաղաքապետի և երեք այլ անձանց օժանդակությամբ՝ առերևույթ հափշտակվել են 19 մլն ՀՀ դրամ արժողությամբ գույք՝ «TOYOTA HILUX 2.7», «VAZ 21214», «UAZ 390945-552» մակնիշի և «VAZ 212140» մակնիշի ավտոմեքենաներ: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի՝ Մարտակերտի քաղաքապետը, նախնական համաձայնությամբ, խմբով, իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթեր կեղծելու և օգտագործելու միջոցով՝ առերևույթ կատարել է խոշոր չափերով գույքի հափշտակություն՝ 1.935.000 ՀՀ դրամ արժողության «CHEVROLET LACETTI-1.4» մակնիշի ավտոմեքենան օտարելով: Գրեթե նույնանման մեղադրանք է ներկայացվել Ասկերանի քաղաքապետին: Իրականում խոսքն այն մեքենաների մասին է, որոնցով մարդիկ բռնագաղթվել են օկուպացված Արցախի Հանրապետությունից՝ 2023 թ. սեպտեմբերյան զուլումի օրերին: //

«Սյունյաց երկիրը» դատապարտում է Կապանի համայնքապետին սպասարկող մեքենան հրկիզելուն միտված հանցավոր արարքը

Մայիսի 21-ին, ժամը 19:30–ի սահմաններում փորձ է արվել հրկիզել Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին սպասարկող մեքենան:

Դեպքի առիթով ոստիկանության Կապանի բաժնում փաստաթղթեր են պատրաստվել և տրամադրվել Սյունիքի մարզային քննչական վարչությանը՝ հետագա ընթացքը կազմակերպելու համար:

«Սյունյաց երկիրը» խստագույնս դատապարտում է տեղի ունեցածը և հույս հայտնում, որ իրավապահ մարմիններն անպայման կբացահայտեն հանցագործության հեղինակին՝ դրանից բխող հետևանքներով:

Միևնույն ժամանակ՝ մենք մերժում ենք առկա հարցերը լուծելու այդ կերպը՝ ինչ դրդապատճառներով էլ այն պայմանավորված լինի:

Այդ ամենի հետ մեկտեղ հիմնավոր հորդոր ենք հղում Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանին ու համայնքապետարանի աշխատակազմին՝ չգերագնահատել կատարված հանցագործության էությունն ու նշանակությունը և համոզված լինել, որ միջադեպը չի կարող փոքր-ինչ անգամ անդրադարձ ունենալ կամ ստվեր նետել դրական այն ընկալումների և զգացմունքների վրա, որ ունի համայնքի բնակչության գերակշիռ մեծամասնությունը համայնքային իշխանության հանդեպ, ինչի արտահայտություններին երեկվանից կրկին ականատես ենք:

Մեր աչքի առաջ են մեծածավալ ու բազմաձիր այն աշխատանքները, որ կատարվել ու կատարվում են Կապանում՝ գոտեպնդելով սահմանապահ համայնքի մարդկանց:

Ժամանակ առ ժամանակ էլ ականատես ենք վստահության և համերաշխության այն ցոլանքներին, որ համայնքի բնակիչներն արտահայտում են համայնքապետի ու համայնքապետարանի հանդեպ:

«Սյունյաց երկրի» խմբագրակազմը, նաև պարբերականի հետևորդների անունից, նույնպես զորակցություն է հայտնում Գևորգ Փարսյանին, համայնքապետարանի աշխատակազմին և վստահություն հայտնում, որ համայնքում իրականացվող ստեղծագործ և նվիրական աշխատանքը կշարունակվի նույն տեմպով ու հետևողականությամբ, ինչպես եղել է տարիներ շարունակ, ինչպես որ կա այսօր:

Բացահայտվել է Կապանի համայնքապետի մեքենայի հրկիզման դեպքը

Մայիսի 21-ի ժամը 19.45-ին անհայտ անձը բենզին էր լցրել Կապան քաղաքի Գարեգին Նժդեհի հրապարակի հարակից տարածքում կայանված «LEXUS» մակնիշի մեքենայի շարժիչի ծածկոցին, հրկիզել այն և դիմել փախուստի:

ՆԳՆ Սյունիքի մարզի փրկարար ծառայության ծառայողների և քաղաքացիների կողմից հրդեհի տարածումը կանխվել էր:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ ավտոմեքենան հրկիզել էր Կապան քաղաքի Ձորք թաղամասի բնակիչ 42-ամյա տղամարդը: Նա ներկայացվել է ոստիկանության Կապանի բաժին, որտեղ ներկայացրել է դիմում-մեղայական:

Կազմված փաստաթղթերը և կապանցի տղամարդը ներկայացվել են Սյունիքի մարզային քննչական վարչություն:

23.05.2024

Հայաստանն ու Ադրբեջանը Տավուշի հատվածում սահմանապահներ են տեղակայում

Ազգային անվտանգության ծառայությունը հաղորդագրություն է տարածել, որը ներկայացնում ենք ստորև.

«Սույն թվականի մայիսի 24-ից Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերը պաշտոնապես ստանձնում են Հայաստանի Հանրապետության պետական սահմանի Տավուշի մարզի Բերքաբեր բնակավայրի 1,9 կմ, Ոսկեպար և Բաղանիս բնակավայրերի 4,9 կմ հատվածների պահպանությունը: Պետական սահմանի Կիրանց բնակավայրի 5,8 կմ հատվածի պահպանությունը, մինչև 2024 թվականի հուլիսի 24-ը, կիրականացվի անցումային սխեմայով:

Միևնույն տրամաբանությամբ, Ադրբեջանի Հանրապետության կողմից սահմանային հանդիպակաց հատվածների պահպանությունը սույն թվականի մայիսի 24-ից իրականացվելու է Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանապահ ծառայության ստորաբաժանումների կողմից»:

24.05.2024

Կապան համայնքի բնակչին մեղադրանք է ներկայացվել՝ համայնքի ղեկավարի ավտոմեքենան հրդեհելու փորձի համար

2024 թ. մայիսի 21-ին տեղեկություն է ստացվել՝ նույն օրը՝ ժամը 19:45-ի սահմաններում, Սյունիքի մարզի Կապան համայնքի ղեկավարի կողմից օգտագործվող Lexus մակնիշի ավտոմեքենան հրդեհելու մասին:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաքննության ընթացքում իրականացված մի շարք գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի էական հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը, ինչպես նաև՝ առերևույթ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, ով նույն համայնքի բնակավայրի բնակիչ է:

Մասնավորապես՝ քննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ վերջինս, դժգոհելով սեփականության իրավունքով իր ընտանիքին պատկանող տան սեփականաշնորհման և հասցեի տրամադրման գործընթացի ձգձգումից, որոշել է ոչնչացնել համայնքի ղեկավարի կողմից շահագործվող, առանձնապես խոշոր չափերի՝ 5 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գույքը՝ Lexus մակնիշի ավտոմեքենան:

Այդ նպատակով նշված անձը նախօրոք իր հետ վերցրել է բենզին և լցրել Կապան քաղաքի Չարենցի փողոցում կայանված Lexus մակնիշի ավտոմեքենայի շարժիչի ծածկոցի և դիմապակու վրա: Սակայն հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվել, քանի որ հրդեհը ժամանակին մարվել է:

Միջնորդություն է ներկայացվել վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին՝ նշված անձի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 44-264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերով, հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է:

Վերջինս դատարան ներկայացվելու համար ձերբակալվել է ոստիկանության աշխատակիցների կողմից և ներկայացվել վարույթ իրականացնող մարմնին: Նույն օրը նշված հոդվածներով նրան ներկայացվել է մեղադրանք:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ. դատարանի որոշմամբ կիրառվել են տնային կալանք և բացակայելու արգելք համակցված խափանման միջոցներ: Նախաքննությունն շարունակվում է:

27.05.2024

Գրիգոր Գևունց և Սմբատ Լպուտյան

Արծրուն Ալեքսանյան, Գևունց, Պարույր Սևակ

Լրացավ Գրիգոր Գևունցի 100-ամյակը

Գրիգոր Առաքելի Գևունցը (Գևորգյան) ծնվել է 1924 թ. Գորիսի շրջանի Քարահունջ գյուղում: Հայրը՝ Առաքելը, սերված էր նախկինում Իրանից Հայաստան գաղթած հայրենադարձների գարմից: Մայրը՝ Շուշանիկը (Խանում) Կապանի շրջանի Վերին Խոտանան գյուղից էր:

Գևունցը սկզբնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի 7-ամյա դպրոցում, ապա ուսումը շարունակել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում, բարձրագույնը՝ Երևանում:

Հինգ տարի աշխատել է Սիսիանի շրջանի Սալվարդ, Գորհայք (Բազարչայ), Շաքի, Տոլորս գյուղերում, ապա՝ 1951-1986 թթ. ուսուցչություն է արել Կապանի շրջանի Բեխ գյուղի 8-ամյա դպրոցում:

Համատեղությամբ և տարբեր առիթներով աշխատել է նաև Կապանի լեռնամետալուրգիական տեխնիկումում, թիվ 1 միջնակարգ երեկոյան դպրոցում, Շրվենանցում, Շիկահողում, Կավարտում, մարզադպրոցում և այլուր: Շախմատի ակումբի վարիչ էր: Այդքանով հանդերձ՝ ստեղծագործում էր: Նրա ստեղծագործությունները տպագրվել են հանրապետական և շրջանային թերթերում, ամսագրերում, հաղորդվել ռադիոյով, հեռուստատեսությամբ: Նամակագրական կապ է ունեցել Հ. Շիրազի, Պ. Սևակի, Ս. Խանզադյանի, Ա. Դարբնու հետ:

Գ. Գևունցի առաջին տպագիր գիրքը՝ «Գինոսի ժպիտները» լույս է տեսել 1975 թ. Երևանում: Երկրորդը՝ «Հավերժի ճամփորդները» 20 տարի անց՝ 1995-ին:

Մեկ տարի հետո հրատարակվեց «Ապրելու պատիվը»: Բեղմնավոր էր 2001 թ. Գևունցի համար: Նախ՝ Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնը բեմադրեց նրա «Գինոսի ժպիտները» կատակերգությունը և ապա՝ «Զանգակ-97» հրատարակչությունը լույս ընծայեց «Զորավար Բալի», «Զանգեզուրյան հումոր», «Մայր, ո՞վ է իմ հայրը» աշխատությունները: 2002-ին հրատարակվեց «Բեխցիները»: Տասներորդ գիրքը, որի վրա աշխատում էր, կրում է «Կյանքի էջեր» խորագիրը, չհասցրեց ավարտին հասցնել:

Գրիգոր Գևունցը մինչև 2012թ. դեկտեմբերի 14-ը՝ իր երկրային կյանքի ավարտը, ստեղծագործում էր...

Նոր հազարամյակ

Եկել եմ անցյալ հազարամյակից,
Մտել եմ արդեն նոր հազարամյակ
Եվ երկու հսկա ժամանակների
Սահմանագլխից
Անցուդարձն եմ դիտում դարերի...
Ինչպիսի՜ դեմքեր թողինք անցյալում,
Ինչպիսի՜ դեպքեր...
Կծնվե՞ն նորեն այդպիսի մեծեր՝
Դժվար է ասել:
Դժվար է, սակայն, և տարակուսել,
Քանզի բեղուն է արգանդը հողի
Քանզի խոսում ենք լեզվով մայրենի,
Քանզի սերտում ենք դասը պատմության
Մեր նախնիների...
Արդ, պաղատանոք աղերսում եմ, տեր,
Դու որ հավերժ ես ու մեր գլխից վեր,
Հայ ու հայրենիք նույնության միջև
Անջրպետ չդնել...
Ինչ էլ որ լինի հետո՝ գալիքում,
Ինչ էլ պատահի այս գնդի վրա,
Թող հայն ապրի իր Հայրենիքում,
Եվ Հայրենիքը միշտ հային մնա...

Խոստովանություն

Մեր գյուղի դաշտում գիշեր ու ցերեկ
Կոմբայնի անուշ ձայնն է տարածվում,
Կտրում արտերի ծովերն անեզերք
Եվ արձագանքում ձորերի խորքում:

Վարում է նրան մի աղջիկ ջահել,
Շեղջեր է դիզում հասկերից հասուն,
Նա իր կրծքի տակ հույսեր է պահել
Եվ աչքերի մեջ ինչ–որ սպասում:

Ու թե երգում է, նրա ձայնը ջինջ,
Կարկաչում գարնան գետակների պես,
Իսկ արձագանքը կարծես ականջին
Մեղմ շշնջում է. «Սիրում եմ ես քեզ...»:

Թվում է կողքին կանգնել է սիրող,
Հարևան դաշտում աշխատող տղան,
Եվ կրկնում է վաղուց սպասվող
Խոստովանության խոսքերը նրան...

1957 Թ.

Փրկության ափ

Պատիվը խոտից էժանացել է,
Հեգնանքը ոսկուց բարձր գին ունի,
Ամոթը իսպառ անհետացել է,
Խարդախությունը սակագին ունի:
Կարիքը ոմանց կախել է թոկից,
Վիրավորանքը կարմիր է հագել,
Ազնվությունը փչել է հոգին,
Արդարությունը սնանկացել է:
Ժամանակը հին երգն է կրկնում,
Տիրող է դարձել անտերությունը,
Վիշտ ու կարիքն են թևանցուկ շրջում
Այս գորշ օրերի խաչուղիներում:
Կախվել է մարդը Աստծո փեշից
Եվ աղերսում է հույսի հանգրվան:
Աստված, դու եղիր ազգիս ապավեն
Եվ փրկության ափ դուրս քաշիր նրան...

Խղճում եմ

Խղճում եմ նրանց,
Ովքեր ասելու ոչ մի բան չունեն,
Բայց միշտ խոսում են,
Աշխարհին տալու մի կում թան չունեն,
Սակայն ուզում են,
Հանդիմանելու իրավունք չունեն՝
Վրադ թնդում են,
Նույնիսկ ժպտալու առիթներ չունեն՝
Անվերջ խնդում են:

Խղճում եմ նրանց,
Ովքեր ուտելու արդեն տեղ չունեն,
Բայց դեռ խժռում են,
Մարդկանց նայելու դեմք ու տեսք չունեն,
Բայց երևում են,
Ովքեր աչք ունեն, բայց դիմացինին,—
Չեն ուզում տեսնել,
Ականջներ ունեն, սակայն չեն ուզում
Սրտի խոսք լսել...

Եվ վերջապես ես խղճում եմ նրանց,
Ովքեր գրեթե ամեն ինչ ունեն,
Սակայն խիղճ չունեն...

Ես վախենում եմ

Շատ եմ վախենում
Մարդկային հոգու սառցակալումից,
Ոմանց ուղեղի ճարպակալումից,
Զուլալ ջրերի ճահճակալումից,
Մեր մատյանների մամռակալումից,
Շատ եմ վախենում...

Ես վախենում եմ
Այս անտերության խորացումներից,
Աչքակապության նորացումներից,
Անտարբերության զորացումներից,
Հայրենի հողի չորացումներից
Շատ եմ վախենում...

Ես վախենում եմ
Ալան–թալանը դիտելուց անգամ,
Ոսկու շեղջերը ոմանց մոտ անչափ
Դիզելուց անգամ,
Կեղծ բարեպաշտի տեսքով Աստծո
Փեշերը ամեն օր լիզելուց անգամ
Շատ եմ վախենում...
Շատ եմ վախենում,
Քանզի ասում են՝
«Աչքը տեսածից է միայն վախենում»...

Լեռնաձորի հիմնական դպրոցը բոլորել է գոյության մեկ դարը

Հետադարձ հայացք նետելով անցած ուղուն՝ տեղեկանում ենք, որ հիմնադրվել է 1923-ին, գործել հարմարեցված շինությունում: 1935-ին Խաչինան թաղամասում կառուցվել է դպրոցական առաջին շենքը: Իսկ 1973-ին շահագործման է հանձնվել ներկայիս կառույցը՝ երկու մասնաշենքով: Անցած ժամանակամիջոցում կրթօջախի վաստակաշատ տնօրեններ, նախ՝ Շմավոն Գևորգյանի, ապա՝ Ռոբերտ Էջանանցու նվիրումի և անբասիր աշխատանքի շնորհիվ կրթօջախի համբավը տարածվել է հանրապետությունում և նրա սահմաններից դուրս...

Մայիսի սկզբից դպրոցի 9-րդ դասարանցիները սկսել են «100 տարի, 100 պատմություն» նախագիծը, որի նպատակն է ուսումնասիրել դպրոցի պատմությունը, նրա դերն ու նշանակությունը գյուղի կյանքում, գործունեության առանձնահատկությունները տարբեր ժամանակաշրջանում: Դպրոցականների ստեղծած հարցազրույցների շարքը մեծ հետաքրքրություն է առաջացրել սոցիարթակներում, դրական արձագանքներ ունեցել:

Մայիսի 25-ին կրթօջախին հրաժեշտ տվեց հինգ շրջանավարտ՝ Սուրեն, Հայկ, Սամվել, Ռիչարդ, Մավրիկ: Օրվա խորհրդին նվիրված հանդիսավոր արարողությունը սկսվեց դպրոցի պուրակում, ուր տեղադրված է գրքի հուշակոթող: Ծովինար Գրիգորյանը հակիրճ ներկայացրեց օրվա խորհուրդը՝ շնորհավորելով բոլորին հիշարժան իրադարձության առթիվ:

Այնուհետև տոնական տրամադրությունը տեղափոխվեց դպրոցի դահլիճ: Հրաժեշտի դասը «Ոսկեդարի ղողանջներ» խորագիրն էր կրում: Հինգ շրջանավարտները հանդես եկան բեմադրությամբ՝ լինելով տարբեր ժամանակաշրջանի հերոսներ: Գրական-երաժշտական համադրությանը մասնակից եղան մյուս դասարանների աշակերտները: Էկրանից հուշեր, հեռավոր օրերի դրվագներ ներկայացրին, իրենց դասավանդած ուսուցիչներին հիշեցին և գնահատանքի խոսք ասացին դպրոցի տարբեր տարիների շրջանավարտները: Մասնավորապես այն կարծիքը հայտնվեց, որ եթե չլիներ Լեռնաձորի դպրոցը, ապա գյուղը կարժանանար մերձակա մի քանի գյուղի (Կաթնառատ և այլն) ճակատագրին: Դպրոցի տարբեր դասարաններում ևս միջոցառումներ էին կազմակերպվել. հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Արմինե Սիմոնյանի ջանքերով դպրոցականները հանդես եկան Ստեփան Զորյանի պատմվածքների հիման վրա ստեղծված բեմականացումով՝ «Երգիծապատում» խորագրով: Թեմատիկ միջոցառումներ եղան մյուս առարկաների դասասենյակներում:

Լեռնաձորի դպրոցն ակամա ասոցացվում է երջանկահիշատակ Ռոբերտ Էջանանցու անվան հետ:

Եվ ընդհանրապես, երբ շրջում ես դպրոցի դասասենյակներում և միջանցքում, տակավին զգում ես Էջանանցու շունչը. մի տեղում նրա հոգեհարազատ լուսանկարն է և պատգամը՝ համեղ կապանյան խոսվածքով. «Օմման սաղ նի ուրան հետա»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

1074 շրջանավարտ մարզում հրաժեշտ տվեց հանրակրթական դպրոցին

Մայիսի 24-ին օրվա խորհրդին պատշաճող միջոցառումներ տեղի ունեցան դպրոցներում: «Սյունյաց երկիրը» շնորհավորում է բոլոր շրջանավարտներին, նրանց մաղթում քաջառողջություն և նվիրական բոլոր իղձերի իրականացում:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎ՝ ի զորակցություն Ռուբեն Վարդանյանի և Բաքվում պահվող մյուս գերիների

Այսօր տեղի է ունեցել «Կենաց ծառ» խորհրդանշական անվամբ ուխտագնացություն դեպի Տաթևի վանական համալիր՝ ի զորակցություն Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի և Բաքվում ապօրինի պահվող մյուս հայ գերիների: Տեղեկությունը հայտնում է Ռուբեն Վարդանյանի գրասենյակը:

Ուրբ Պողոս-Պետրոս տաճարում գերաշնորհ Տ.Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ համատեղ աղոթք է անցկացվել՝ հանուն հայ գերիների շուտափույթ վերադարձի:

«Տաթևը հայոց հոգևոր և ազգային-ազատագրական վերածննդի խորհրդանիշներից է: Այսօր շատ կարևոր է ներշնչանք և ուժ ստանալ մեր ազգային-հոգևոր ակունքներից՝ մեր նոր զարթոնքի համար: Մեր խոցված ազգային արժանապատվությունը վերականգնելու, հուսահատությունների ու հիասթափությունների կորստաբեր շղթան կոտրելու համար նաև խիստ կարևոր է Բաքվում պահող մեր գերիների շուտափույթ և ապահով վերադարձը հայրենիք»,– ասել է Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը:



Խորհրդանշականորեն նաև «Կենաց ծառ» է տնկվել և պտղատու նոր այգի բացվել, Տաթևում և Հալիձորում ազգագրական-մշակութային միջոցառումներ են անցկացվել: Համայնքի բնակիչները ավանդական հարիսա են պատրաստել: Համերգային կատարումներով հանդես են եկել Արցախի ազգային նվագարանների նվագախումբը և «Մռակած» երգչախումբը:

Նշենք, որ ուխտագնացությունն իրականացվել է Ռուբեն Վարդանյանի ծննդյան օրը: Այսօր Արցախի նախկին պետնախարարը 56 տարեկան է դառնում:

25 ՄԱՅԻՍԻ, 2024 Թ.

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի՝

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց Երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 29.05.2024թ.: